ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<08>> ----------հուլիս----------2025թ. N ՄՈ/655 -Ա

ք. Արմավիր

«ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼԻԼԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ, 163-րդ և 164-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 11-ի N ՄՈ/587-Ա որոշումը և Լիլիթ Պետրոսյանի 2025 թվականի հուլիսի 4-ի դիմումը.

որոշում եմ՝

1. «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լիլիթ Պետրոսյանին տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա տեղափոխված արձակուրդը՝ 2025 թվականի հուլիսի 11-ից 24-ը ներառյալ՝ 10 աշխատանքային օր տևողությամբ:
2. Լիլիթ Պետրոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Գոհար Գյուլբեկյանին:
3. «Վաղարշապատի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Գոհար Գյուլբեկյանի աշխատավարձի վճարումը 2025 թվականի հուլիսի 11-ից 24-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Լիլիթ Պետրոսյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվական հուլիսի 25-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2025-07-08 16:40:52 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից
eID

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա. ՄԵԽԱԿՅԱՆ